


ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻԻ 8.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՕԳՈՍՏՈՍ 31
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹԱՐԱՆ
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ
Դ Ա Ս Ե.

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐԾՆԱԿԱՆ

ԱՄԷ ցնա Պիղատոս, ապա եթէ այդպէս ի-
ջէ, թաղաւոր ոմն եւ դուռ Պատասխանի եւտ Յի-
սուս. դու ասես՝ թէ թաղաւոր իցեմ. բայց ես
յայտ իսկ ծնեալ եմ եւ ի դոյն իսկ եկեալ եմ յաշ-
խարհ. զի վրայեցից ճշմարտութեանն. ամենայն,
որ ի ճշմարտութեանն է, լսէ բարբառոյ իմոյ. Ասե-
ցնա Պիղատոս. Զինչ է ճշմարտութիւնն. զայս
իրբեալ ասաց. դարձեալ ել առ Հրեայան եւ ասե-
ցնաս. ես եւ ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի
նմա:

ՅԷ. ԺԸ. 37-39.

Հոռով ՄԱՅԵՏԻՆ Պիղատոս, ան-
ուանեալն Պոնտացի, որ ծննդեալն,
Ժ

տաղանդով կամ Հնարագիտութեամբ
հասած էր բարձրագոյն պաշտօնի, երբ
Հռովմէն ելաւ Հրէաստան գալու եւ
Տիրերեայ կայսեր անուամբ զայն կա-
ռաւարկելու համար, անշուշտ ամենե-
ւին չը նախատեսեց, որ իր ստորին
պաշտօնավարութեան հետ պիտի գայ
միանայ մի մեծ եւ վատահամբաւ
հաշակ: Պիղատոս զբաղուած էր նիւ-
թական խորհրդներով եւ իւր ապա-
գայ պաշտօնավարութեան մէջ ուրիշ

բախդի երազներ կը տեսներ: Նա մեծ-
ցած էր իւր դասու մարդկանց պէս
արհամարհել ամեն հաւատալիք, եւ
ամենեւին չէր մտածէր, որ իւր գա-
ւառապետութեան սահմանագլուխն
ոտք կոխելով՝ պիտի մանէր հրաշից
երկիրն: Զը գիտէր, որ այն օգն, զոր
պիտի շնչէր, ծանրաբեռնուած էր մար-
դարէութեամբ: Զը գիտէր, որ Հրէաս-
տանի գերօրինակ երկիրն շնչասպառ
կը հեծէր մի խորհրդաւոր ակնկալու-
թեամբ: Զը գիտէր, որ մի աստուա-
ծային տեսարան, մի սքանչելահրաշ
թատր բացուելու վերայ էր, և նոյն
ինքն Պիղատոս պիտի իւր դերը խաղար
այս անհամեմատ տեսարանին մէջ, ուր
Աստուծոյ տնօրէնութիւններն պիտի
կատարուէին մարդկային ազգի համար:
Եթէ իւր առաջին քայլադիմումն մէջ
փառք կը նշմարէր Պիղատոս, այս փառ-
քը քաղաքական երկնակամարին վերայ
կը տեսներ, ուստի, ընդհակառակն իւր
աստղը պիտի ընկներ, և չը գիտէր ա-
մենեւին, որ Նախախնամութիւնն հա-
զարներու մէջէն ընտրած է զինքն, որ
մինչեւ ի կատարած աշխարհի մնայ կա-
տարեալ տիպար կրօնական անտարբե-
րութեան: Այսպէս խօս եղեւ: Ինչ
յատկութիւն, որ տանք Պիղատոսին,
թէ՛ թոյլ մարդ անուանենք, թէ՛
փառասէր, թէ՛ անիրաւ դատաւոր,
այս ամենը դարձեալ կը պարունակին
իւր անտարբերութեան մէջ: Անտար-
բերութիւնն Պիղատոսի բնաւորութե-
յատկական դժագիրն է, և այս յատ-
կութիւնն է, զոր արժան է քննել:

Աւետարանիչներն ինչ որ խօսած
և աւանդած են մեզ, բոլորն այս ան-
տարբերութեան կը վերաբերին, և այս
բնաւորութեամբ է, որ կը ներկայա-
նայ մեզ այս սոսկալի և աղետալի հըռ-
չակաւ համբաւեալ անձն:

Բայց տակաւին մեր նայուածքն

սոյն անտարբերութեան տիպարին վե-
րայ չը ձգած, բարձրացնենք զայն դէպ
ի Յիսուս, որ մեր բնարանին մէջ կը
ներկայանայ հանդէպ Պիղատոսի: —
Պոնտացի Պիղատոս եւ ՅԻՍՈՒՍ: —
Ի՛նչ հակադատներ երկու անձանց
մէջ: Ի՛նչ անհամեմատութիւն երկու
ցունց խօսակցութեան մէջ:

Հրէական կատաղի բազմութիւնն
կը բերէ զՅիսուս Պիղատոսի առաջ և
կը պահանջէ դատապարտել: Հռով-
մայեցի դատաւորն նախ կուզէ իմա-
նալ թէ ինչ յանցանք ունի Յիսուս:
Կատաղի բազմութիւնն Յիսուսի բա-
րութիւններէն և յայտնի անմեղութենէն
շփոթուած զըպարտութեան կը դիմէ,
կ'ուզէ այնպիսի մեծ ամբաստանութիւն
ամբաստանել, որ զՅիսուս կորուսանէ:
Ոչ թէ կ'ուրանայ նորա առաքինու-
թիւններն ու բարութիւններն, այլ
յանցանաց կը վերածէ և իբրեւ յան-
ցանք կը մեկնէ: Ամեն մարդ կը զար-
մանայ Յիսուսի վերայ, ամեն մարդոյ
երախտադիտութիւն կը ներշնչէ, եւ
ահա այս ամեն աստիճաններն են, ընդ-
որս նա դէպ ի գահն կը դիմէ: Նա կը
դիմէ սրտերն նուաճելով և յափշտա-
կելով: Նա կամի թաղաւոր լինիլ Հը-
րէից, և ո՞վ կարէ տարակուսիլ այս մա-
սին, քանի որ ինքն իւր բերանով կը
խօսի: Այս կերպիւ կը մեկնէ ահա
Հրէական բազմութիւնն Յիսուսի Քը-
րիստոսի ընթացքն ու գործքերն: Սոյն
ամբաստանութիւնն այնչափ յառաջ
գնացած է, որ այլ եւս ասպցուցի
կարօտութիւն չէ մնացած: Ամբա-
տանադք և զըպարտիչք կ'աղաղակեն,
Պիղատոս կը շուարի, մի կողմէն զը-
պարտիչներուն կը նայի, միւս կողմէն
Յիսուսին, որոյ վերայ մինչեւ ցայնվայր
ուշադրութիւն դարձուցած չէր, ուս-
տի և կամի հարցափորձել և քննել
զՅիսուս:

Որչափ կոպիշի Պիղատոս, երբ կը տեսնէ թէ այս տարօրինակ ամբաստանեալն, փոխանակ իւր անձն պաշտարանելու, դատապարտութեան առաջն կը մղուի, տակաւին մանրամասն չը քննուած իւր ամբաստանութիւնն կը ծանրացնէ եւ երբ դատաւորն կը հարցնէ. « Զինչ գործեալ է քոյ, այս խօսքերով կը պատասխանէ. « Իմ արքայութիւն (ուրեմն արքայութիւն ունի) չէ յայտ աշխարհէ, եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարանչէին արգէօք՝ զի մի մասնեցայց Հրէից, բայց արդ՝ թագաւորութիւն իմ չէ աստիւ (Ա՛րք, — ուրեմն եթէ ոչ այժմ, անշուշտ մի օր ոչիտի թագաւորէ) :

Ուրեմն Պիղատոս այլ եւս հարկաւ դրուած կոմ ստիպուած չէ ամբաստանողներէն, վասն զի ամբաստանելոյն խոստովանութիւնն ինքնին իրաւունք կը տայ ստեփանոսողաց : Բայց որչափ որ սոյն կամովն եւ աներկիւղ խոստովանութիւնն ինքնին ՚ի դատապարտութիւն կը տանի, սակայն այնչափ տարօրինակ է, որ հարկ է հաստատել եւ այնպէս վճիռ տալ : Պիղատոս մի երկրորդ յատուկ հարցումն եւս կ'առաջարկէ, որոյ մէջ դատապարտութեան նիւթն պարզապէս եւ բառ առ բառ որոշուած է. « Ուրեմն թագաւոր ես դուդ : Այն ժամանակ տիեզերաց թագաւորի բերանէն այս նշանաւոր խօսքերն կ'եննեն, « Դու ասես՝ թէ թագաւոր իցեմ, բայց ես յայդ իսկ ծնեալ եմ եւ ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն, ամենայն, որ ՚ի ճշմարտութենէ է, լսէ բարբառոյ խնոյ :

Սկզբէն մինչ ՚ի վախճան ինչ տարօրինակ տարաւորութիւն պիտի անէին այս սրտասխաններն Պիղատոսի վերայ : Առաջին խօսքերէն Պիղատոս

այնպէս կը կարծէ, որ իրեն ներկայացած ամբաստանեալն մի աշխնդակ փառասէր մարդ է, որ իւր դիտասուբութիւններն ՚ի կատար հասուցանելու համար բնաւ պատրաստի միջոցներ չունի եւ սակայն այնչափ վստահ է կատարման համար, ամենեւին չը կեղծէր, այլ յայտնապէս կը խօսի : Բայց յետագայ խօսքերէն Պիղատոսի գաղափարներն բոլորովն կը շփոթուին. « Եւ ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեաննդ : Ի՞նչ պաշտօն մի թագաւորի համար, ի՞նչ տարօրինակ թագաւորութիւն, ի՞նչ շփոթութիւն գաղափարաց : Պիղատոս, որ ամենեւին կարող չ'էր ամենափոքր յարաբերութիւն նշմարել այսպիսի անհամաձայն գաղափարաց մէջ, իսկոյն ինքնին վճռեց, որ գործ ունի ոչ թէ փառասիրի, այլ մի երազագիտի հետ : Երազագէտ, ահա քեզ արժանի առարկայ դատաստանական քննութեան, ահա քեզ արժանի պատճառքադրադիտական յուզման : Պիղատոս հասկացաւ իւր գործն եւ այս արհամարհական հարցումն առաջարկեց ամբաստանելոյն, « Զինչ է ճշմարտութիւնդ, եւ պատասխանելոյն չը սպասելով դարձաւ դէպ ՚ի Հրէաներն եւ ասաց. « Ես՝ եւ ոչ մի ինչ պատճառագտանեմ ՚ի նմադ :

Ամենայն ինչ վսեմ է այս խօսակցութեան մէջ, վսեմ է նա եւ Հռովմայեցւոյն վերջին խօսքերն : Ո՞վ կարող է չը զարմանալ Յիսուսի Քրիստոսի բացարձակ պատասխանելոյն վերայ : Նա թագաւոր է, բայց ի՞նչ կերպիւ : Ի՞նչ բանի մէջ կը կայանայ նորա թագաւորութիւնն : Արտաքին նկատմամբ թագաւորութիւնն է արժանաւորութեան ամենաբարձր աստիճան, որում մարդ կարող է հասնիլ իւր նմանեաց մէջ : Բայց յայտնանէ թագաւորութիւն

է մի կամքի անդիմադրելի տիրապե-
տութիւն հազարաւոր նուաճեալ կա-
մաց վերայ : Արդ՝ այս երկու նկատ-
մամբ եւս թագաւորական տիրադրոն
արժանանալու համար ոչ գահ պէտք
է, ոչ գանձ, ոչ երկիր, ոչ զօրք : Կան
մտքով թագաւորողներ, որոց թագն
աւելի մեծ փայլ կ'արձակէ, եւ որոց
տիրապետութիւնն ոչ այնչափ զգա-
լի է և ոչ այնչափ երկիւղալի, և սա-
կայն աւելի իրական է, աւելի ընդար-
ձակ և աւելի անխփախ : Հանձարն
կը թագաւորէ հոգիներու վերայ, կը
թագաւորէ գերեզմանի խորքէն, կը
թագաւորէ այն սերնդոց վերայ, որք
տակաւին յաջնարհ եկած չեն և նորա
ոչ փառքն կը յափշտակուի իրմէն և
ոչ տիրապետութիւնն : Եթէ այսպէս
է, աւրեմն ինչո՞ւ աւելի չ'ընդարձա-
կենք թագաւոր տիրոջս բացատրու-
թիւնն, ինչո՞ւ զանաւնք այս փառքն
նորան տալու, « Որ եկած է յաջնարհ
ճշմարտութեանն վկայելու » :

Ճշմարտութեանն կ'ասեմ, որ 'ի վեր
է քան զիսթ, վասն զի մտածութիւն է,
'ի վեր է քան զմտածութիւն, վասն զի
մտածութեան օրէնքն է, 'ի վեր է քան
զկարծիս, վասն զի կարծեաց դատա-
ւորն է, 'ի վեր է քան զկամս, վասն զի
կամաց կանոնն է : Ճշմարտութեան կա-
սեմ, բայց ոչ թէ մի որ և իցէ մաս-
նաւոր ճշմարտութեան, այլ նոյն իսկ
ճշմարտութեան, ճշմարտութեանն
Աստուծոյ, ճշմարտութեանն որ արա-
րածոյն իւր արարչին հետ ունեցած
յարաբերութեանն կը վերաբերի, ճշ-
մարտութեանն, որ մարդկային բուն
կենաց և վախճանին կը վերաբերի, ճշ-
մարտութեանն, որ ամեն ճշմարտու-
թիւններ յինքն կը բովանդակէ և ա-
մէն ճշմարտութիւններէ տեւական է
և անմահ, և որ միայն է համապա-
տասխան ամեն յաւիտենական ստու-

գութեանց և իրականութեանց : Նա-
որ սոյն ճշմարտութիւնն իւր անհուն
ընդարձակութեամբ յինքն կը բովան-
դակէր, եւ նորա մէջ կ'ապրէր, նա-
որ մի անձնաւորութիւն կը կազմէր
նոյն ճշմարտութեան հետ եւ ստաց
իւր աշակերաններուն, « Ես եմ ճշմար-
տութիւն », նա թագաւոր էր, թէ ոչ :

Նորա թագաւորութիւնն 'ի վեր
էր արդեօք ամեն բանէ, ինչ որ
թագաւոր անունն կարող է կրել
երկրիս վերայ : Եւ եթէ թագաւո-
րէն թագաւորութիւն կ'ենթա-
դրէ և հպատակներ, միթէ այս հը-
պատակներն և թագաւորութիւնն կը
պակասէին Յիսուս Քրիստոսին : « Ա-
մենայն, որ 'ի ճշմարտութեանէ է, լսէ
է, լսէ բարբառոյ խմոյ » : Ահա ան-
բութիւն առաւել բացարձակ և միա-
հեծան քան Աեսարներու կայսերու-
թիւնն, առաւել խոր՝ քան հանճարոց
տիրապետութիւնն : Ով որ Յիսուսի
ձայնն կը լսէ, իւր բովանդակ կեանքն
նորան կը հպատակեցնէ, նորան կը հը-
նազանդի ամենայն հնազանդութեամբ
և պաշտելով զնա 'ի վեր կը դասէ քան
զամենայն իշխանութիւնս և քան զա-
մենայն պետութիւնս և կընդունի, որ
անսահման իրաւունք ունի նա ոչ մի-
այն իւր կենաց, այլ և իւր ներքին ե-
ութեան վերայ : Հաստատուած է ու-
րեմն նորա թագաւորութիւնն : Գուք
ինքնին դատեցէք, « Նա թագաւոր է,
նա ծնուած է թագաւորութեան հա-
մար » : Ի խորս աստուածային էութե-
ան յաւիտենական բան Աստուծոյ,
բան անընդհատ ճառագայթեալ 'ի ծո-
ցոյ Հօր, բան, որ կոչուին ունէր 'ի
յաւիտենից տիեզերաց մէջ ցոլացնել
Աստուծոյ լոյսն և հնչեցնել իւր իմաս-
տութիւնն, այս աստուածային բանն
նշանակուած էր դահու համար, եւ
այս դահն բարձրանալու համար էր :

որ նա ի յառիտենականութենէ ի ժա-
մանակաւորն իջանելով՝ ծնաւ իբրեւ
մարդ և մարդկանց մէջ շրջեցաւ : Յա-
ւիտենականութենէն իջաւ բարձրա-
նալ ի գահ, նաև ի խաչ . վասն զինա
յաշխարհ եկաւ ոչ միայն ճշմարտու-
թիւնն հոգակելու, այլ նաեւ ճշմարտ-
ութեանն վիպելը համար : Մեծ ճշմար-
տութիւնն, որոյ համառօտութիւնն է
անձնութեան, նա կնքեց զայն իւր
անձն նուիրելով : Միտած էր նա թա-
գաւորութեան համար և այն թագա-
ւորութիւնն ստացաւ ոչ միայն իբրեւ
ժառանգութիւն, այլ իբրեւ յազթա-
նակ իւր վիրայութեան : Ահա ոյս սրաւ
ճագաւ այն հզօր թագաւորն ընդ ա-
ռաջ երանելով վրէժխնդրութեան,
կ'որոտասանէ թագաւոր բառն, որով
զինքն չաշարանաց պիտի մատնեն . յօ-
ժարակամ կը վիպէ ճշմարտութեանն
և այսպէս կրկնակի հիմամբ կը հաս-
տատէ իւր թագաւորութիւնն, թէ
փառօք ծննդեան եւ թէ փառօք
մարտիրոսութեան : Տե՛ս, տե՛ս ուրե-
մքն, ո՛վ Պիղատոս, թէ ճշմարտապէս
թագաւոր է արդեօք քո հանդէպ
կանգնած մարդն, թէ ոչ : Բայց ի՞նչ
պէս կարող ես դու տեսնել : Դու մին-
չեւ անգամ չես հաւատար ճշմարտու-
թեան գոյութեանն : «Զի՞նչ է ճշմար-
տութիւնն» կը հարցանես դու : «Զի՞նչ
է ճշմարտութիւնն : Մեծ խօսք իւր
տեսակին մէջ, համեմատելովքեզ հետ
խօսակցող աստուածային անձի խօսքե-
րուն հետ : Ո՛վ պիղատոս, մարդկու-
թեան մեծ մասն քո բերանով կը խօ-
սի . « Զի՞նչ է ճշմարտութիւնն » :
Այս է նշանաբան անտարբերութեան,
այս է բարբառ ներկայ դարուս :

Յիսուսի Քրիստոսի խօսքերն հաս-
կացանք . Յիսուսն ճանաչելիք, աշ-
խատիք ճանաչել այժմ զՊիղատոս :
Երբ կ'արտասանէ Պիղատոս թէ «Զի՞նչ

ճշմարտութիւնն» ամենեւին դիտա-
ւորութիւն չ'ունի ուրանալ և արհա-
մարհել ամեն ճշմարտութիւն : Իբրեւ
աշխարհի մարդ, իբրեւ սրաշունտաւոր
մարդ, նա գիտէ, որ կան մարդկանց
համար հատկանալի ճշմարտութիւն-
ներ և գիտէ թէ ի՞նչ արժէք ունին
սոյն ճշմարտութիւններն : Նա ականջ
դրաւ Յիսուսի Քրիստոսին (եւ քանի՞
քանի մարդիկ նորա հետ) որ կը քա-
րողէր այն երկրորդական ճշմարտու-
թիւններէն մի քանիսն, որք մեր ան-
ցաւոր կենաց կը վերաբերին : Այսով
սի ճշմարտութիւններն, Պիղատոսէն
ոչ առաջ և ոչ յետոյ, մարդկային աղ-
գին անհաճօյ չ'են երեւցած : Այսօր
խիկ միշտ ծարաւի են մարդիկ այս ճիշ-
մարտութեանց և անխանջ կ'որոնեն :
Թէ քանի քանի ջանքեր եւ զոհողու-
թիւններ ի գործ կը դնեն այս օգտա-
կար ճշմարտութիւններն ստանալու
համար, զարմացան անժանի է : Ան-
ցաւոր կենաց վերաբերեալ ճշմարտու-
թիւններն այսպէս անյագութեամբ կ'ո-
րոնուին : Այս կէտէն զննելով՝ աշխար-
հըս գոգցէս գրկած է Աւետարանի
այս խօսքն որ կ'ասէ . լայն է դուռն և
և ընդարձակ ճանապարհն, որ տանի
ի կորուստ, և անձուկ է դուռն, որ
է ճանապարհ կենաց :

Պիղատոսի արհամարհանքն մեծ
ճշմարտութեան, կրօնական ճշմարտու-
թեան համար է : Նա լաւ կը հասկա-
նայ, որ Յիսուս այս ճշմարտութեան
համար կամի խօսիլ . ուստի և կը պա-
տասխանէ, ուր է այս ճշմարտութիւ-
նը և ի՞նչ կամի, որ անենք այս ճշմար-
տութիւնն :

Ամեն կրօնական կուսակցութիւն-
ներէ, բաժանումներէ և նաեւ համա-
ղումներէ արտաքոյ մէկ անորիշ և խո-
ւան դաշտի վերայ, որ անտարբերու-
թիւն կ'անուանի, կան մի դասակարգ

մարդիկ , որոց համար այսպիսի հար-
ցումներն ու զբաղումներն բարբառող
օտարախի կ'երեւին , և ինքեանք իսկ օ-
տարօտի են մարդկային տեսակին մէջ .
վասն զի ոչ իրենց բնաւորութիւնն ու
բոշոյ յատուկ զգացողութիւններ ու-
նին , ոչ ատելութիւն կամ սէր կրողքան
կրօնի համար , և ոչ երկիւղ կամ ցան-
կութիւն ունին կրօնի նկատմամբ : Կան
նոցա շուրջն մի կարգ մարդիկ եւս ,
որք նոցա նման դէպ 'ի յերկիր խոնար-
հեալ և երկրայիններով զբաղեալ , մերթ-
ընդ մերթ կանգ կ'առնուն , առ վայր
մի կը կրնգհատեն իրենց երկրաւոր աշ-
խատանքն , և յանկարծական մտածու-
թեամբ ըմբռնեալ , մի երկջատ նայ-
ուած կը ձգեն դէպ 'ի երկինք և կը
հարցանեն ինքնին . — Ես , որ կը զգամ
թէ կ'ապրիմ . ես , որ սկսած եմ գո-
յութիւն ունենալ . ես , որ այն օրէն
երեսուն կամ քառասուն տարի յա-
ղաջ չը կայի երկրիս վերայ և սակաւ
տարիներէն զինի դարձեալ պիտի չը լի-
նիմ . ես որ կը ճանաչեմ , թէ էական
տարբերութիւն կայ բարւոյն և չարին
մէջ , ինչպէս սեւին և սպիտակին մէջ ,
եւ այս տարբերութեան աղղեցու-
թեամբ կը զգամ , որ մի ուրիշ աշխար-
հի կը պատկանիմ ես , քան թէ այս
գոյներու և ձեւերու աշխարհին . ես ,
կասեմ , էակս բանական , բարոյական
և պատասխանատու , ես՝ ուստի՜ ելած
եմ և ո՞ր կ'երթամ : — Երկրորդներն
այսպէս կը խօսին ահա . իսկ առաջին-
ներն ընդհակառակն այնպէս կը կար-
ծեն , որ իրենց կեանքն սահմանափա-
կուած է միայն ծննդեան և մահուան
մէջ , իրենց արժանաւորութիւնն կը
կայանայ 'ի մէջ երկուց սահմանաց վա-
տանունութեան եւ մարդկային փա-
ռաց , իրենց երջանկութիւնն կը գտնուի
այն հորիզոնին մէջ , որոյ եզրերն են մի
կողմէն բնութիւնն և միւս կողմէն երկ-

րաւոր յոժարութիւններն , սորա ան-
խռով և անստան յառաջ կը գլիմեն մի
անդունդէ , որոյ վերայ յիշողութիւն
չունին , դէպ 'ի միւս անդունդն , ու
այն վերայ գիտութիւն չ'ունին , և այն-
պէս վստահ են , որ գողցես իրենց բն-
թացած ճանապարհն յաւիտենական է
կամ իբրեւ թէ իւրաքանչիւր առա-
ւօտ իրենց մտաց համար մի անանց
սահման է : Երբ մեղուն իւր բլիճնե-
րն կը ծրագրէ և կը պատրաստէ . երբ
մրջիւնն իւր ամբարներն կը փորէ , պի-
տի կարծուի ուրեմն , որ զբաղուած
են մի վերին աշխարհի և մի աստուծոյ
կենաց համար : Անցաւոր բաներով
պարապողներն մարդկային բնութեան
ամենէն ազնիւ տարրն , որ է նորա կը-
րօնական զգացումն , առ ոտն կը կո-
խեն անցաւոր ուրախութեանց և կե-
նաց հոգսերու մէջ և 'ի վերջոյ բոլոր-
ովին անտես կը լինի մարդոյ աչքէն
և կը մոռացուի : Մարդն կը գործէ ոչ
իբրեւ մարդ , այլ իբրեւ մեղու եւ
մրջիւն :

Բայց որովհետեւ կան մարդիկ ևս ,
որոց համար անտես եղած չէ կրօնա-
կան զգացումն ու շարժումն , այսպիսի
մարդիկ ինչ կը մտածեն արգեօք , երբ
կը տեսնեն , որ իրենց շուրջն կան մար-
դիկ , որք կը ձգտին դէպ 'ի անտեսա-
նելին և անփութին . աշխարհի մէջ են ,
բայց մի ուրիշ աշխարհի վերայ կը մը-
տածեն և կը խորհին : Կրօնի զգացու-
մով վառուած այս մարդիկներու վե-
րայ առաջիններն չեն խօսիր , այլ կը
տեսնեն և կը լուեն , և սակայն նոցա
լուութիւնն մի խօսք է , և ինչ է այս
խօսքն : Նոքա լուեւեայն մեզ կ'ասեն ,
— Կրօնասէր մարդիկն իրենց բնութե-
նէն տարբեր մարդիկ են , առանձին
ճաշակ ունին . կրօնասիրութեան հա-
ճութիւն կը զգան , առանձին ճանա-
պարհ ունին և այնպէս կրննթանան .

մէնք չենք պատարովէր , թող սիրեն
կրօնքն : Իսկ մեք ոչ ժամանակ ունինք
և ոչ կարօտութիւն կրդգամք նոցա հե-
տեւելու . հետեւապէս կրօնքն մեզ չը
վերաբերիր : Երբ Հրէայք իրենց օրէն-
քէն վրայութիւն կը բերէին , Պիլա-
տոս կ'ասէր . « Եթէ ես Հրէայ եմ » :
Այսպէս կ'ասեն ճիշդ նաեւ լուսն ան-
տարբերներն , միթէ մենք կրօնասէրէն
եմք . բայց չեն գիտեր , որ սոյն խօս-
քէն այս հետեւութիւնն կենէ . — մի
թէ մեք մարդ եմք : Իւրաքանչիւրս
մեր ճանապարհն երթանք , կը յարեն
նորա , բաւական է , որ իրարու վնաս
չը պատճառենք : Կարեւոր խնդիրն այն
չէ , որ մենք ուրիշ բան կը մտածենք ,
նորա ուրիշ , այլ այն է , որ իրարու
խտրան չը լինինք և կամ վնաս պատ-
ճառենք : Ժամանակն կարճ է , վայր-
կ'աններն ստիպողական , գործքերն
շատ , թող իւրաքանչիւրս մեր գործն
յառաջ տանենք . թող նորա արգելք
չը լինին մեզ , և մեք բնաւ արգելք
չենք լինիր նոցա . կ'ուզեն գործեն ,
կ'ուզեն ոչ :

Որչափ հարցումներ որ առաջար-
կենք այսպիսի մարդկանց , որչափ որ
հետամուտ լինինք , պիտի տեսնենք ,
որ նորա չը գիտեն թէ ինչ է ճշմար-
տութիւնն , և եթէ շատ ստիպենք ,
պիտի պատասխանեն , որ այսչափ մի-
այն գիտեն , թէ չը կայ ճշմարտու-
թիւն . և պիտի պատասխանեն այս-
պէս :

« Ինչ և լինի ճշմարտութիւնն , ա-
մենեւին յարաբերութիւն չունի իրա-
կան կենաց հետ : Առանց ճշմարտու-
թեան կարող է մարդ հարստանալ ,
պատուոյ հասնիլ , մեծ լինիլ յաջ մարդ-
կան և առհասարակ կանոնաւորել իւր
ընթացքն , ինչպէս որ պէտք է : Ճա-
նապարհն գծուած է . ուղին հարթ .
աշխարհի պէս հին մի քանի սկզբունք-

ներ բաւական են մարդոյն խր գործ-
քերն տնօրինելու , միայն թէ կարողա-
նայ բոտ տեղւոյն և բոտ պարագային
ի կիր առնուլ և իւր վիճովին յարմար-
ղնել : Մտաց մեծամեծ զննութիւն-
ներն ու վարդապետութիւններն եւ
ոչ մի համամատութիւն ունին սովո-
րական կենաց խնդիրներու հետ , այլ
շատ անգամ օտարօտի են և ներհակ :
Ի՞նչ են զննութեան սովորական հե-
տեւանքներն , եթէ ոչ շփոթութիւն ,
տարակոյս և տագնապ մտաց : Եթէ
ճշմարիտ է , որ մահուան վերայ խոկա-
լն տպրելէ կ'արգելու , ևս առաւել
ճշմարիտ է , որ Աստուծոյ վերայ խոր-
հին գործելէ կ'արգելու :

« Գիտեք թէ կ'օնական ճշմարտու-
թիւնն փոխանակ վնասելու օգտակար
ևս լինէր , միթէ հարկ կար զայն գրա-
նելու , և ով գտած է մինչեւ ցարդ :
Ոմանք կը պարծին եւ կը վքանան ,
թող բարեաւ վայելեն իրենց հաճելի
երազներն , մենք չ'ենք բառնար իրենց
հաճոյքն , և ոչ կը մասնակցինք . վասն
զի մենք չ'ենք հաւատար նաեւ , որ
ճշմարտութիւնն զիւրամատոյց լինի :
Մի ապացոյցն մեզ բաւական է : Ահա
մի կողմէն կան մարդիկ , որ ճշմարտու-
թիւնն միայն այս ինչ կարծեաց մէջ կը
տեսնեն , եւ ահա միւս կողմէն կան
մարդիկ , որ այն ինչ կարծեաց մէջ կը
տեսնեն , և այնպէս համոզուած են :
Ո՞ր կողմն է ճշմարտութիւնն , մեք չը
գիտեմք , բայց միայն կը տեսնեմք , որ
մարդ կարող է հաւասարապէս հա-
մոզուած լինիլ ինչպէս ստութեան ,
նոյնպէս և ճշմարտութեան մէջ : Եթէ
ճշմարտութիւն երեւէր երկրիս վերայ ,
պէտք էր , որ տիրէր ամեն մարդոյ մը
տաց վերայ : Բայց քանի որ տիրած չէ ,
մենք չենք կարող հաւատալ նորա ներ-
կայութեանն . միակ ճշմարտութիւնն
համոզումներն են : Մարդ ինչ բանի

որ կը հաւատայ, իւր ճշմարտութիւնն այն է, այս է ահա միակ իրականըն : Լաւ է, որ իւրաքանչիւր մարդ իւր համոզումն ամուր բռնէ և ըստ այնմ իւր կեանքն տնօրինէ : Մէք կարող եմք ասել, որ մեր համոզման հաւմեմատ մեր կեանքն կը տնօրինենք, արհամարհելով այն խռովարկութիւններն, որք աւելորդ կ'երեւին մեզ . և ահա ըստ մեր դատողութեան մենք եւս ճշմարտութեան մէջ եմք :

« Իրաւ է, որ մեր շուրջն կրօնական իրողութիւններ չստ կան, որք երկար ժամանակէն ՚ի վեր սովորական եղած են մեր բնական երկրին մէջ, եւ մէք պատշաճ կը դատուիմք արտաքուստ միայն յարմարիլ այս սովորութեանց և այս դժուարին բան չէ : Մէք չենք ուղեր բնաւ ոչ մեր և ոչ աշխարհի հանգըստութիւնն խռովել մի պարզ գաղափարի համար : Ա՛յ մեր կարծեաց վերայ համոզուած եմք եւ ո՛չ այլոց . մէք կարծիք եւս չունինք բնաւ : Մէք չեմք ուղեր յառաջամարտիկ լինիլ մի կարծեաց համար և առ այս գիմագրաւել ՚ի մարտիրոսութիւն : Ճշմարտագէտ ամենէն մեծ աստուածսիրութիւնն ու փիլիսոփայութիւնն այն է, որ հետեւինք այն սովորութեանց, որոց մինչև ցարդ հետեւած են, և այսպէս ահա օրհնել կը տանք մեր ամուսնութիւններն, մկրտել կը տանք մեր զաւակներն, թաղել կը տանք մեր ննջեցեալներն, հետեւելով այն եկեղեցւոյ արարողութեանց, որոյ մէջ ծնուած եմք : Այս եղանակն եթէ օգուտ չ'ունի, վնաս եւս չ'ունի բնաւ . կամ աւելի լաւ է ասել, օգուտ ունի, որով հետեւ այլոց խաղաղութիւնն չը խռովէր :

« Ի՞նչպէս կարելի է չընշմարել, որ ամեն պատահմանց մէջ մեր այս գրողութիւնն օգտուէտ է : Այն մարդի-

կրն, որոնք որ և իցէ մասնաւոր համոզումն կ'ընդունին կրօնական նիւթոց նկատմամբ, յայտնապէս կը դիմէն դէպ ՚ի վտանգ : Եթէ լաւ ճանապարհի վերայ են, լաւ է, եւ դուք կ'ասէք թէ՛ ահա փրկուած են, և մէք կը հաւանիմք . իսկ եթէ վատ ճանապարհի վերայ են, կ'ասէք թէ՛ ահա կորսուած են : Արդ ինչպէս առաջիններն լաւ համոզուած չէին, նոյնպէս և վերջիններն : Արեւմն երկրորեան ևս չիսթխաղ մի խաղաղին : Պէտք է, որ մէք աւելի խոհեմ եւ աւելի իմաստուն լինինք : Պէտք է, որ այս երկու վտանգաւոր ճանապարհի մէջ տեղէն ընթանամք : Ճշմարիտ է որ կարող չեն ճշմարտութեան բարեկամաց մէջ հաշուել զմեզ, եթէ կայ ճշմարտութիւն, բայց աւելի ճշմարիտ է, որ թշնամեաց մէջ եւս կարող չեն հաշուել : Մէք անտարբեր եմք և այս բառն միայն իսկապէս ցայց կը տայ մեր կացութեան վսեմութիւնն : Անտարբերութիւն բառն իսկ մեզ պէս անտարբեր է . իրաւ է փայլուն չէ, բայց դոնէ ապահով է :

« Ամենէն լաւն այս է, որ մեր նմանեաց մէջ ոչ որ կարող չէ գանգատիլ, վասն զի մէք և ոչ մի կուտակցութեան բարեկամ եմք, այլ բարեկամ եմք ամենուն : Իւրաքանչիւր կարծիք անպատճառ հակառակ է մի այլ կարծեաց : Մէք, որ ամենեւին կարծիք չունինք, կարող չեմք ոչ թշնամի լինիլ այլոց, և ոչ այլոց թշնամութիւնն գրգռել մեր վերայ : Շատ փափագելի էր, մարդկային աղբի խաղաղութեան համար, որ բոլոր աշխարհ մեղ նման անտարբեր լինէր . բայց գիտեմք, որ այս անկարելի է . թող ուրեմն իւրաքանչիւր որ իւր համոզման հետեւի, եւ թող ներեն մեզ, որ մէք բնաւ համոզումն չունինք » :

Այսպէս է ահա Պիղատոսի և ա-

մեն անտարբերներու մտածութիւնն , որ իւր խանձարուն պատուելով եւ յերեւան գտնով արձակ համարձակ կը քարոզուի : Քննեմք ուրեմն ուշադրութեամբ, և ապա անշուշտ կարող

եմք դատել , թէ արդեօք անտարբեր յատկութիւնն իրապէս մի անտարբեր կայութիւնն է , թէ ոչ :

(Եւրոնիէ Է :)

ԾԱՂԿԱՔԱՂ ԱՄԵՐԻՔԱԿԱՆ

ՀԱՒԱՏՔՈՎ, ՔԱԼԵԼՈ

Հիւս Կտակարանին մէջ անձ մի չը կայ՝ որ իմ վրաս այնչափ մեծ նուիրական յարգանք մի տպաւորէ : Երչափ Աբրահամ : Իր ազնուականութեանը տիպոսն այս էր , « Անիկայ Աստուծոյ բարեկամն էր » : Ստեփան կռապաշտութեան մէջ ծնած և մեծցած , Տիրօք ինքնիշխան կամօքը եւ այնպիսի միջոյններով , որ մեզ անձանթօթ են , Աստուծոյ հաւատաց : Անոր վրայ առաջին սորվածնիս , Աստուծոյ զԱբրահամ անակնկալ յանկարծ կոչելն է ըսելով , « Քու երկրէդ և քոն ազգականներէդ և քու հօրդ տունէն ելի՛ր և գնա՛ այն երկիրը զոր քեզ պիտի ցուցնեմ » :

Աբրահամ կը հնարանդի : Անկա հարցմունքներ չունէր : Իր երթալու օտար երկրին համար աշխարհագրական տախտակ մի կամ առաջնորդող Գիդը մը (Gide) իրեն ցոյց չի տրուիր : Հաւատքով իր ընտանեկան կարաւանովը ճամբայ կ'ենէ եւ երկնային Ձեռքին առաջնորդութեանը կը հետեւի . . . : Անկիտ ճամբայ ելաւ . « Ո՛ր երթալը չի գիտնալով » :

Ահա այն այս մէկ գեղեցիկ տողին մէջն է , որ ամեն հաւատոյ որդիներուն հոգեւոր պատմութիւնը կը կարդամ : Այս տողը այնպիսի ամենախորին դաս մի , այսինքն Աստուծոյ վրայ այնպիսի

հնազանդ հաւատք մի կը յայտնէ , որ մարդկային սրտին համար , ամենէն հարկաւոր դասն է : Կարձ մէկ վըճռով , հաւատքով քալելը կը նկարագրէ :

Եւ ի՞նչ է այն , միթէ աննպատակ յանդուգն ձեռնարկութիւն մի է : միթէ բաղդովի թափառում մի , ո՛չ , այլ ճիշդ անոր հակառակը : Աստուծոյ ճամբան երթալն է եւ ոչ թէ անձին փափաքած կամ ուզած ճամբան :

Հաւատքով քալելը ճիշդ մեր երկնաւոր Հօրը հետ ձեռք ձեռքի , քայլ ընդ քայլ հարթ կամ խորտաբորտ տեղերէ , բլրներու վրայէն կամ վարէն , վայրկեան առ վայրկեան քալելն է , զօրութեամբ կամ լռելեայն հաւատալով թէ , « Բոլոր բարի մարդիկներու քայլերը Տիրօքմէ կ'առաջնորդուին » : Պէտք եմ Անոր հրամանին հընադանդելու : Այսօր , այսօրուան գործը պէտք եմ ընել , այսօրուան մէջ ինձ շնորհուած զօրութեամբ կամ կարողութեամբ : Այսօրուան բոլոր պէտք եմ կրելու : Իմ պարտաւորութեանս կանոնը այս օրուան համար է : « Իմ օրուանս պէտքին համաձայն պիտի ըլլայ իմ զօրութիւնս » : Վաղուան ճամբորդութիւնը , վաղուան աշխատանքը և վաղուան փորձութիւնները